

2. փոխանցումներ՝ թղթակցային հաղորդակցությունների լայն ցանց, ակնթարթային փոխանցումներ՝ WESTERN UNION, CONTACT, MIGOM, UTS, INTEREXPRESS, VMT, MONEYGRAM,
3. պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, միջազգային վճարային համակարգի քարտերի տրամադրում, սպասարկման կետեր (բանկոմատներ և POS -տերմինալներ),
4. ավանդների ընդունում,
5. ահատվություն,
6. արկերի տրամադրում՝ սպառողական վարկերի տրամադրում, տնտեսվարող սուբյեկտներին վարկերի տրամադրում, ապրանքների ապահով ձեռք բերման նպատակով ֆինանսավորում, մեկ անգամյա սպառողական վարկային քարտերի տրամադրում, վերականգնվող վարկային քարտերով վարկավորում, հիպոթեքային վարկերի տրամադրում:

Բանկերը առաջարկում են նաև հետևյալ ծառայություններ՝ էլեկտրաէներգիայի, ջրի, շարժական և ոչ շարժական հեռախոսների, գազի կոմունալ վարձավճարների ընդունում, բանկոմատների միջոցով կոմունալ վարձավճարների ընդունում, ճանապարհային չեկերի տրամադրում և սպասարկում, պետական կարճաժամկետ պարտատոմսերի առք ու վաճառք, արժույթային ռիսկերից ապահովում, վարկային մամակի բացում, հաստատում, կատարում ու ավիզավորում արտարժույթով, ակրեդիտիվի ձևակերպում, երաշխիքային պարտավորում ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց արդյունավետությունը ակնհայտ է, բավականին ցածր կիրառություն ունեն հանրապետությունում: Դրանց ներդրման խնդիրը ժամանակակից տնտեսության պայմաններում հրատապ է:

Այսպիսով՝ այսօր ՀՀ բանկերը առաջարկում են միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրակարգ և առանձնահատուկ ծառայությունների մատուցում, ընդ որում բանկերը ձգտում են հաճախորդներին առաջարկել այնպիսի ծառայություններ, որոնց նախադեպը թեև կարող է արդեն իսկ գոյություն ունենալ շուկայում, սակայն նաև որոշակի նորարարություն է պարունակում: Միաժամանակ արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց արդյունավետությունը ակնհայտ է, բավականին ցածր կիրառություն ունեն հանրապետությունում: Դրանց ներդրման խնդիրը ժամանակակից տնտեսության պայմաններում հրատապ է:

ԱՆՔՍԱՆՈՐ ԱՄԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ազատ շուկայական հաղորդակցությունների ձևավորման և զարգացման պայմաններում զգալիորեն բարձրացում է արդյունավետ դրամավարկային քաղաքականության վարման, հետևաբար բանկային համակարգի և բանկերի գործունեության կատարելագործման ուղիները և դերը: Այդ առումով կարևոր է ուսումնասիրել բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, դրանց կազմակերպական ձևերը:

Տնտեսագիտության մեջ ընդունված է, որ «բանկային գործունեությունը բիզնեսի կազմակերպման ձևերից է»: Հետևաբար, զարգացած շուկայական տնտեսական գրականության մեջ բերված հետևյալ միտքը, որ «Ֆիրման բիզնեսի իրավաբանական կազմակերպման ինքնուրույն ձև է, հաստատված կարգով գրանցված ձեռնարկատիրական միավոր, որն ունի առևտրային ինքնուրույնություն, ընդ որում դրանք բազմազան են»¹, վերաբերում է նաև բանկային գործունեությանը: Յու.Ա.Լվովը գտնում է, որ «ըստ տնտեսական կարգավիճակի բանկերը բաժնետիրական տիպի մասնավոր կորպորացիաներ են, որոնց հիմնական նպատակը շահույթի ստացումն է»:

Բանկերի եկամտի աղբյուրներն են բանկային ծառայությունների դիմաց հաճախորդների վճարներն և «աշխատող» ակտիվներից՝ փոխառությունների, վարկ, արժեթղթեր, ստացվող տոկոսները. նրանք փոխառությունների և վարկերի տրամադրման, ինչպես նաև արժեթղթերի ձեռք բերման համար իրենց անունից ներգրավում են ֆինանսական միջոցներ²: Նույն կարծիքը ունեն նաև Յու.Վ.Պաշկուսը և Օ.Ն.Միսկոն. «...բանկը բիզնեսի հատուկ կազմակերպական միավոր է, որի գործունեության սեկտորը փոխառական կապիտալով օպերացիաներն են: Բանկերը ունեն հաճախորդներ՝ փոխատուներ և վարկառուներ, և թղթակիցներ՝ այլ բանկերը և ֆինանսական վարկային ինստիտուտները, որոնց հետ բանկը մշտապես գտնվում է գործընկերային հաղորդակցությունների մեջ և, որոնք հիմնվում են մատուցվող ծառայությունների փոխկապվածության վրա»³:

Այս մոտեցումը ավելի հստակ ներկայացնում է Պ.Կուլագինը. «...շուկայական տնտեսությունում բանկը, ըստ էության, նույն ձեռնարկությունն է կամ ձեռնարկատիրական միավորը, միայն հատուկ՝ տնտեսական գործունեության դրամավարկային ոլորտում: Ազատ առք ու վաճառքի սկզբունքի հիման վրա նրանք ներգրավում

¹ Цыцерева А.Ю. Современные фирмы в развитой рыночной экономике: виды, формы, основные показатели деятельности // Вестник СПб. Серия «Экономика». 1992 № 19. С. 272.

² Львов А.Ю. Основы экономики и организации бизнеса. СПб., 1992. С. 35.

³ Пашкус Ю.В., Мисько О.Н. Введение в бизнес: Практическое пособие для предпринимателей. Л., 1991. С. 64.

են ռեսուրսներ և դրանք տեղաբաշխում են ըստ տարբեր նշանակությունների, առաջնորդվում են գներով և իրենց շահույթի, կապիտալի և համբավի (հուսալիության) աճի չափանիշներով»¹:

«Բանկը միջնորդ չէ, որը հավաքում է միջոցները և տրամադրում է վարկեր, այլ իրենից ներկայացնում է ձեռնարկություն, որը ընդունակ է ստեղծել վճարման միջոցներ»²: Լ.Ն.Կրասավինան, Ջ.Ի.Լավրուշինը, ինչպես նաև Է.Յ.Բրեզեյը նշում են, որ «թուրժուական հասարակությունում բանկը կապիտալիստական ձեռնարկությունների հատուկ ձև է, որը իրականացնում է փոխատվական կապիտալի տեղաշարժը, նրանց մոբիլիզացումը և տեղաբաշխումը»³:

Պ. Սամուելսոնի կարծիքով. «բանկը հարաբերականորեն պարզ գործնական ձեռնարկություն է, իսկ բանկային գործունեությունը՝ բիզնես, որը նման է մյուս բիզնեսներին»⁴:

Այսպես՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման մեջ բանկերի դերը, նրանց կողմից իրականացվող բազմաթիվ օպերացիաները, որոնց նույնիսկ ամենապարզ թվարկումը արդեն իսկ բացահայտում է նրանց բազմակողմանի գործունեությունը, ավելի նախընտրելի է նրանց համարել ձեռնարկություններ: Այս մասին է վկայում նաև համաշխարհային փորձը: Լայն տարածում է ստացել նաև «բանկային արդյունաբերություն» հասկացությունը, որը ընդգծում է բանկային գործունեության արտադրական բնույթը⁵:

Բանկի առանձնահատկությունը որոշում է նրա գործունեության բնույթը, որի նպատակը բանկային արդյունքի ստեղծումն է:

Բանկային արդյունքը ստեղծվում է վճարային միջոցներից և ծառայությունների մատուցումից:

Բանկային ծառայությունները ասելով հասկանում ենք բանկի կողմից իրականացվող մեկ կամ մի քանի օպերացիաները, որոնք բավարարում են հաճախորդի որոշակի պահանջները:

Բանկային ծառայությունների հիմնական առանձնահատկություններն են՝

- կրում են ոչ նյութական բնույթ,
- արդյունքը չի կուտակվում, սակայն բանկերում ստեղծվում են դրամական միջոցների պահուստներ, որը կառավարում է բանկի կառավարիչը,
- բանկային օպերացիաների իրականացումը և ծառայությունների մատուցումը կարգավորվում է օրենսդրական կարգով,
- նոր բանկային ծառայությունների հեղինակը հեղինակային իրավունք չունի:

Ըստ բանկային ռեսուրսների ձևավորման և տեղաբաշխման միջոցների տարբերվում են՝ ակտիվային օպերացիաներ, պասիվային օպերացիաներ: Պասիվային օպերացիաների միջոցով բանկերը ձևավորում են իրենց միջոցները՝ դեպոզիտ, սերտիֆիկատների վաճառք, վարկեր և այլն: Ակտիվային օպերացիաների միջոցով ներգրավված և սեփական միջոցները բանկերը տեղաբաշխում են տարբեր կազմակերպությունների և բնակչության միջև:

Կախված բանկային գործունեության յուրահատկությունից բանկային ծառայությունները բաժանվում են՝ ավանդական և ոչ ավանդական ծառայություններ:

Բանկի ավանդական ծառայություններից են դեպոզիտային, վարկային և հաշվարկային օպերացիաները:

Դեպոզիտային օպերացիաները կապված են ավանդների կամ դեպոզիտների ընդունման հետ, այսինքն՝ փոխառության օպերացիա է: Ընդունելով ավանդներ՝ բանկերը ձևավորում են շրջանառու միջոցներ, որոնց միջոցով նրանք ներդրումներ են կատարում ազգային տնտեսությունում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի կողմից ներգրավված փոխառու միջոցների հաշվին ձևավորվում է նրանց ակտիվների 93 %-ը, իսկ ներգրավված միջոցների հիմնական աղբյուր հանդիսացող դեպոզիտները կազմում են առևտրային պասիվների 86%-ը⁶: Բանկի կողմից իրականացվող պասիվային օպերացիաները ուղեկցվում են ռիսկով: Պասիվային օպերացիաների կառավարման մեջ պետք է հաշվի առնել նաև այդ լրացուցիչ ռիսկը և, բացի այդ, ներգրավված միջոցների ծախսերի և եկամուտների, որոնք կարելի է ստանալ այդ միջոցները փոխառության տալով կամ արժեթղթերում ներդնելով, հարաբերակցությունը: Հետևաբար, ակտիվային և պասիվային օպերացիաների կառավարման փոխկապվածությունը որոշիչ դեր ունի բանկի շահութաբերության համար:

Ներգրավելով շրջանառու միջոցները՝ բանկը անցնում է իր երկրորդ խնդրի իրականացմանը՝ հավաքված կապիտալի արտադրական օգտագործմանը: «Կապիտալի արտադրական տեղաբաշխում իրականացվում է այն ժամանակ, երբ ծախսված միջոցները նորից և ավելցուկով... տրվում կամ նորից հետ են վերադարձվում ձեռնարկության նպատակները իրականացնելիս»:

Բանկային ամենակարևոր ակտիվային օպերացիան վարկայինն է՝ առևտրա-արդյունաբերական ձեռնարկություններին փոխատվությունները: Ավանդական իմաստով բանկը, որպես կանոն, իր գործունեության հիմնաքարը համարում է առավելագույն եկամտի ստացումը, այլ ոչ թե իր հաճախորդների պահանջներին բավարարումը, իսկ վարկը այդ նպատակը իրականացնելու հիմնական միջոցն է: Սակայն, օրինակ ճապոնիայում և Գերմանիայում հետպատերազմյան տարիներին խոշոր առևտրային կազմակերպությունները և բանկերը առաջնորդվում էին ոչ թե զուտ առևտրային նպատակներով, այլ հասարակության պահանջներ-ների բավարարումով: Հենց այս քաղաքականության շնորհիվ այս երկրները կարճ ժամանակահատվածում

¹ Кулагин П. Становление и функция новой системы банков: опыт Восточной Европы // Вопросы экономики. 1994. № 4. С. 65.

² Банковская наука: состояние и перспективы развития // Деньги и кредит. 1996. № 4. С. 70.

³ Там же: С. 60.

⁴ Банковское дело / Под ред. О.И. Лаврушина. М., 1992. С. 267.

⁵ Калтырин А.В. Проблемы и перспективы развития банковской системы. Ростов н/Д., 2000. С. 21.

⁶ Долан Дж., Кэмпбелл К.Д., Кэмпбелл Р.Дж. Деньги, банковское дело и кредитно-денежная политика. М.-Л., 1991. С.170-174.



կարողացան առաջատար տեղ զբաղեցնել համաշխարհային տնտեսությունում: Մասնավորապես, այսպես առաջացավ «ճապոնական հրաշքը»¹:

Վարկերը դասակարգվում են ըստ մի շարք հատկանիշների՝

1. ըստ տրամադրվող գումարի ծավալի՝ մանր, միջին, խոշոր, որը յուրաքանչյուր բանկի և հաճախորդի համար որոշվում է անհատապես՝ կախված կողմերի ֆինանսական հնարավորություններից,
2. ըստ վարկառուների՝ պետական, բանկային, ֆինանսական վարկային հիմնարկների վարկեր,
3. ըստ փոխառուների՝ անհատական, այսինքն՝ մասնավոր անձանց, բանկային, արդյունաբերական, պետական և այլն,
4. ըստ օգտագործման՝ ներդրումային, սպառողական, արտահանման, ներմուծման, արժեթղթերի օպերացիաների համար,
5. ըստ ժամկետների՝ կարճաժամկետ(մինչև 1 տարի), միջնաժամկետ (5-7տարի), երկարաժամկետ (7 և ավել տարի):

Հաշվարկային օպերացիաները տնտեսական սուբյեկտների միջև իրականացվող օպերացիաներն են, որոնք կարող են լինել ինչպես կանխիկ, այնպես էլ ոչ կանխիկ ձևով: Վերջինիս դեպքում վճարողի հաշվից գումարը փոխանցվում է ստացողի հաշվին:

Բանկի ոչ ավանդական ծառայություններից են՝ միջնորդային ծառայությունները, ձեռնարկությունների զարգացմանը ուղղված ծառայությունները՝ բորսայի ներդրումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը, իրավաբանական օգնությունը, ինֆորմացիոն ծառայություններ և այլն, երաշխիքների տրամադրումը, ձեռնարկությունների հաշվապահական օգնություն և այլն:

Կախված ծառայությունները ստացող սուբյեկտներից տարբերում են՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ: Գործնականում այս կամ այն անձին մատուցվող ծառայությունների հավաքածուն կարող է մույնը լինել տարբեր բանկերում, տարբեր են միայն տրամադրվող գումարի չափերը:

Բացի այդ, մատուցվող ծառայությունները կարող են լինել վճարովի և անվճար: Սակայն դա չի նշանակում, որ բանկային ծառայության այս կամ այն տեսակը մշտապես վճարովի է կամ անվճար: Բանկը ինքն է որոշում է, թե որ ծառայությունն է վճարովի, իսկ որը անվճար: Այսպես՝ հաշվարկային, վարկային և դեպոզիտային օպերացիաների կազմի շատ օպերացիաներ կարող են իրականացվել անվճար: Ելնելով դրանից հաճախ բանկային ծառայությունները բաժանվում են մաս եկամուտ բերողի և չբերողի, թանկի և էժանի:

Նյութական արդյունքի հետ կապված լինում են՝ նյութական արդյունքի շարժի հետ կապված ծառայություններ և գույք ծառայություններ: Բանկերը իրենց դրամական օպերացիաներով նպաստում են նյութական արդյունքի շարժին, իսկ տվյալ ծառայությունները բանկի համար ստեղծում են նոր լրացուցիչ արդյունք:

Ջուտ ծառայությունները մատուցվում են կազմակերպություններին և քաղաքացիներին²:

Առաջատար բանկերը ակտիվորեն ընդլայնում են իրենց մատուցած ծառայությունների շրջանակը, բարձրացնում հաճախորդների սպասարկման որակը: Բանկերը իրենց հաճախորդներին առաջարկում են՝ արագ և ընթացիկ հաշիվների բացում և իրացում, էմիսիոն սինդիկատի բանկային մուրհակ, խնայողական սերտիֆիկատների, ինչպես նաև հասարակ բաժնետոմսերի ձեռքբերում, անհրաժեշտ ինֆորմացիայի տրամադրում, հաճախորդի անհատական սպասարկում³:

Այսպիսով՝ բանկերը հանդիսանում են ձեռնարկություններ, որոնց նպատակը բանկային արդյունքի ստեղծումն է: Վերջիններիս թվին է պատկանում նաև բանկային ծառայությունը, որը հաճախորդների պահանջ-մուծքների բավարարմանը ուղղված գործողություն է:

ՄԱՐՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ. Բորանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հանրային բարիքների նկատմամբ երկրի բնակչության պահանջմունքի բավարարումը ցանկացած պետության կարևոր գործառնություններից է: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Խորհրդային Հայաստանում այդ պահանջմունքը պլանավորվում էր և բավարարումը կազմակերպվում էր պետության կողմից:

ՀՀ-ում պլանային տնտեսությունից շուկայական համակարգին անցումը ուղեկցվեց հանրային կառավարման բարեփոխումներով և տեղի ունեցած հանրային ծառայությունների բաշխում նոր ձևավորված տարածքային միավորների, մասնավոր հատվածի և պետության միջև: Այդ ծառայությունների մատուցման ոլորտում առաջացան տեսանկյունային պարզորոշման կարիք ունեցող մի շարք խնդիրներ: Դրանք հիմնականում կապված էին հանրային ծառայությունները մատուցող երեք հատվածների՝ համայնքների, մասնավորի և

¹ Саничев М.С. Банковская система в условиях рыночной экономики. Алма-ата, 1991. С.7-8.

² Бабичева Ю.А. Банковское дело: Учебник. М., 1999 г. с.312-313.

³ Там же: с.342.